ՌՈՒԲԵՆ ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
ԼԱՈՒՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու
ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գ/հ լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Հոդվածում ներկայացված է կառավարչական գործունեության անվտանգության խնդիրը: Այս խնդրի հրատապությունը պայմանավորված է ժամանակի պահանջով, քանի որ կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգությունը մարդկային ռեսուրսների արդյունավետ աշխատանքը պայմանավորող հիմնական հոգեբանական գործոններից մեկն է: Անձի հոգեբանական անվտանգությունը պայմանավորված է աշխատանքային գործունեությունում առկա այն վտանգների բացառմամբ, որոնք հաճախ արտահայտվում են հոգեմարմնական դրսևորումներով, սակայն միշտ չէ, որ դրանք տեսանելի են, քանի որ տեսանելի չէ բուն աշխատանքի և մարմնական դրսևորման միջև անմիջական կապը: Թեև երևույթի առկայության մասին վկայող բազմաթիվ ուսումնասիրություններ կան, սակայն բացակայում են հենց կառավարիչների շրջանում տվյալ երևույթի արտահայտվածության, զարգացման ընթացքի ու կանխարգելման ուղիների վերաբերյալ գիտական հիմնավորումները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կառավարչական գործունեություն, հոգեբանական անվտանգություն, հոգեմարմնական դրսևորումներ, մասնագիտական ձևախեղում, հուզական

Կառավարչական գործունեության անվտանգության խնդիրը հոգեբանական հետազոտություններում ի հայտ է եկել վերջին շրջանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ խնդիրը մարդկային ռեսուրսների արդյունավետ աշխատանքը պայմանավորող հիմնական հոգեբանական գործոններից է: Անձ–մասնագետի պատրաստման խնդիրը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից, որոնցից հատկանշական է հետևյալը. մասնագետը, ունենալով բարձր մասնագիտական պատրաստվածություն, հաճախ անձնային հոգեբանական որակների ոչ բավարար զարգացվածության արդյունքում աշխատանքային գործունեությունում ենթարկվում է հոգեբանական վտանգների:

Այդ վտանգները հաճախ արտահայտվում են հոգեմարմնական դրսևորումներով, սակայն միշտ չէ, որ դրանք տեսանելի են, քանի որ բուն աշխատանքի և մարմնական դրսևորման միջև անմիջական կապը տեսանելի չէ: Աշխատանքային գործունեությունում անձի հոգեբանական անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է զարգացնել համապատասխան հոգեբանական որակներ, որոնք թույլ կտան մարդ–մարդ փոխհարաբերության մեջ զերծ մնալ հոգեբանա–

կան վնասակար ապրումներից, որոնք, ախտահարելով հուզական ոլորտը, անմիջականորեն անդրադառնում են աշխատանքի արդյունավետության վրա, սակայն մեր երկրում դեռևս ձևավորված չէ կառավարչի անձնային որակների նկատմամբ պահանջների հստակ համակարգ: Ժամանակակից պահանջներին համապատասխան կառավարչական գործունեության անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել հոգեբանական այն որակների ցանկը, որոնք թույլ կտան մասնագետին անվտանգ իրականացնել գործունեությունը: Այնուհետև հարկավոր է մշակել այդ որակների չափման մեթոդներ, ինչպես նաև դրանց պարբերաբար զարգացման ծրագրեր:

Կառավարչի մասնագիտական գործունեությունն ունի իրեն բնորոշ որոշակի առանձնահատկություններ: Դրանցից մեկն այն է, որ կառավարչի գործունեության հաջողությունն ավելի շատ պայմանավորված է նրա անձնային հատկություններով, քան մասնագիտական պատրաստվածությամբ [7]:

Կառավարման ոլորտի հայտնի տեսաբան Ֆ. Դրուկերի կարծիքով՝ կառավարումը գործունեության հատուկ տեսակ է, որը մարդկանց խումբը վերափոխում է արդյունավետ, նպատակաուղղված և արտադրողական խմբի [4]: Մասնագիտական գրականության մեջ առկա են մասնագիտությունների բազմաթիվ դասակարգումներ: Այդ դասակարգումներից աշխատանքային հոգեբանությունում հայտնի է Ե. Ա. Կլիմովի դասակարգումը, ըստ որի՝ առանձնացվում են մասնագիտությունների հետևյալ հինգ խմբերը՝

- Մարդ–կենդանի բնություն. այս տիպի ներկայացուցիչները գործ են ունենում բուսական և կենդանական օրգանիզմների, միկրոօրգանիզմների և նրանց գոյության պայմանների հետ:
- Մարդ–տեխնիկա (և անկենդան բնություն). այս մասնագիտությունների ներկայացուցիչները գործ են ունենում աշխատանքի անկենդան, տեխնիկական օբյեկտների հետ:
- Մարդ–մարդ տիպի մասնագիտություններ. այստեղ հետաքրքրությունների, ճանաչողության, վերափոխման առարկա հանդիսանում են սոցիալական համակարգերը, մարդկանց խմբերը, տարբեր տարիքի մարդիկ:
- Մարդ–նշանային համակարգ. այս խմբին դասվում են բնական և արհեստական լեզուները, պայմանական նշանները, սիմվոլները, թվերը, բանաձևերը:
- Մարդ–գեղարվեստական կերպար. այս մասնագիտությունների ներկայացուցիչներին գրավում են գեղարվեստական արտացոլման երևույթներն ու փաստերը [5]:

Սույն դասակարգման համաձայն՝ կառավարչական գործունեությունը մենք դիտարկում ենք որպես մարդ–մարդ համակարգի մասնագիտություն: Այս խմբի մասնագիտությունների դեպքում մասնագիտական գործունեություն իրականացնող մասնագետը պետք է օժտված լինի մի շարք անձնային որակներով, ինչպիսիք են մարդկանց հետ աշխատանքային ընթացքում կայուն լավ տրամադրությունը, շփման պահանջմունքի առկայությունը, մարդկանց մտադրությունները, տրամադրությունը, մտքերը հասկանալու, մարդկային փոխհարաբերություններում արագ կողմնորոշվելու և տարբեր մարդկանց հետ ընդհանուր լեզու գտնելու ունակությունը [5]:

Մասնագիտական գործունեության ընթացքում մասնագետների շրջանում կարող են դրսևորվել մասնագիտական ձևախեղումներ, ինչը ենթադրում է անձի կոգնիտիվ ձևախեղում, հոգեբանական ապակողմնորոշում, որոնք ձևավորվում են մասնագիտական գործունեության արտաքին և ներքին գործոնների անընդհատ ճնշման հետևանքով և հանգեցնում են անձի սպեցիֆիկ–մասնագիտական տիպի ձևավորման [6]: Գիտական և հատուկ գրականության մեջ միասնական մոտեցում չկա «մասնագիտական ձևախեղում» հասկացության բովանդակության սահ-

մանման առումով: «Մասնագիտական ձևախեղում» տերմինը՝ որպես մարդու վրա մասնագիտական գործունեության բացասական ազդեցություն, առաջարկել է Պիտիրիմ Սորոկինը: Մասնագիտական դեֆորմացիային իրենց աշխատանքներում անդրադարձել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Ս. Գ. Գելլերշտեյնը (1930), Ա. Կ. Մարկովան (1996), Է. Ֆ. Զեերը (1999, 2003):

Մասնագիտական ձևախեղումներն առավելապես արտահայտվում է «մարդ-մարդ» համակարգում գործունեություն ծավալող մասնագետների շրջանում: Մասնագիտական ձևախեղման նշան են ինչպես մարդու գործունեության և վարքի խախտումները, այնպես էլ մասնագիտական փոփոխությունները անձի ներսում, որոնք չեն համապատասխանում մասնագիտական էթիկայի նորմերին և չեն արժանանում հասարակական խրախուսանքի [2]:

Տևական ժամանակ անձի և նրա մասնագիտական գործունեության փոխադարձ կապն ուսումնասիրվում էր գործունեությանը անձի ադապտացիայի (հարմարվողականության), նրա մասնագիտական պիտանելիության, մասնագիտական գործունեության դրդապատճառների և աշխատանքից բավարարված լինելու վերաբերյալ մեթոդաբանական մոտեցման տեսանկյունից, ինչով պայմանավորված էր նրա գործունեության արդյունավետությունը, սակայն մասնագիտական զարգացումը հաճախ ուղեկցվում է մասնագիտական աղավաղումներով, որոնք բացասական ազդեցություն են ունենում անձի զարգացման դինամիկայի վրա, ձևախեղում են նրա կերպարը, փոխում են մարդու կարիերայի ուղին: Այդ մասնագիտական ձևախեղումների արդյունքում որքան էլ մասնագիտական կրթության գործընթացում մարդը պատրաստված լինի իրեն առաջադրվող գործառույթների և պարտականությունների կատարմանը, առանց հոգեբանական պատրաստման տարրերի և գործունեության ընթացքում հոգեբանական ուղեկցման աշխատանքների կիրառման հեշտությամբ կարճ ժամանակում կարող է ենթարկվել բազմաթիվ մասնագիտական անձնային աղավաղումների, արդյունքում՝ մասնագիտական «մաշման»: Նման պայմաններում, կախված մասնագիտական գործունեության առանձնահատկություններից, կարող են դրսևորվել մի շարք անձնային ձևախեղումներ, որոնց արդյունքում ի հայտ եկող անձի մասնագիտական մաշվածությունը մեծապես նվազեցնում է մասնագիտական գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև չի ապահովվում տվյալ գործունեության մեջ մասնագետի հոգեբանական անվտանգությունը: Խնդիրն արդիական է, սակայն մասնագիտության մեջ անձի մաշվածության հիմնախնդրի գիտական հիմնավորումը բացակայում է: Վերջին շրջանում մեր իրականությունում այս ոլորտում հետազոտություն է իրականացրել Ա. Բ. Լոքյանը՝ նշելով, որ մասնագիտության մեջ առկա է «հուզական այրում» երևույթը [1]: Որոշ հեղինակներ այս երևույթը բնութագրել են որպես ֆիզիկական, հուզական և մտավոր հյուծվածության վիճակ, որը դրսևորվում է ինտենսիվ շփում, գործունեության լարված պայմաններ ենթադրող մասնագիտություններում: Տվյալ համախտանիշն արտահայտվում է դեպրեսիվ իրավիճակներով, հոգնածության և հուսահատության զգացումով, էներգիայի և խանդավառության բացակայությամբ, իր աշխատանքի դրական արդյունքները տեսնելու ընդունակության կորստով, տարատեսակ շփումների նկատմամբ բացասական դիրքորոշումներով: Հուզական այրման զարգացումը կախված է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններից [3], սակայն այսօր կիրառական հոգեբանության առջև ծառացած կարևոր խնդիրներից է մասնագետների՝ հուզական այրումից խուսափելու այնպիսի ռազմավարությունների մշակումը, որոնք կապահովեն անձի անվտանգությունը՝ դրանով իսկ նպաստելով մասնագիտական գոր-

ծունեության արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով՝ իրականացված վերլուծությունները վկայում են երևույթի առկայության մասին, սակայն հենց կառավարիչների շրջանում տվյալ երևույթի արտահայտվածության, զարգացման ընթացքի ու կանխարգելման ուղիների վերաբերյալ գիտական հիմնավորումները բացակայում են: Այդ առումով կարևորվում է նշված ուղղությամբ գիտական աշխատանքների իրականացումը, որը հնարավորություն կտա կատարելու գիտականորեն հիմնավորված տեսական վերլուծություն և առաջարկելու հիմնավոր գործնական քայլերի փաթեթ՝ գործունեության մեջ անձի «հյուծումից» կամ «մաշվածությունից» խուսափելու, այս երևույթը կանխարգելելու և արդյունքում անձի մասնագիտական գործունեության հոգեբանական անվտանգությունն ապահովելու, գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Բ. Լոքյան, Հուզական այրման մակարդակի ախտորոշման մեթոդիկայի տեղայնացման ընթացակարգ, Մեթոդական ուղեցույց .- Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015.- 52 էջ:
2. Безносов С. П. Профессиональная деформация личности. — СПб.: Речь, 2004. — 272 с.
3. Бойко В. В., Синдром «эмоционального выгорания» в профессиональном общении /. СПб, «Сударыня», 2000, 32 с.
4. Друкер, Питер, Энциклопедия менеджмента.: Пер. с англ. — М.: Издательский дом “Вильяме”, 2004. — 432 с.
5. Климов Е. А. Введение в психологию труда, Москва, Издательское обединение “ЮНИТИ”, 1998
6. Профессиональная деформация личности. Учебное пособие. (Составители А. В. Коваленко, Л. А. Шиканов). – Томск: Изд-во ТПУ, - 2009. - 90 с.
7. Ревская Н. Е.. ПСИХОЛОГИЯ МЕНЕДЖМЕНТА. Конспект лекций. — СПб.: 2001 Альфа.—240 с.

ВОПРОС ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ УПРАВЛЕНЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

РУБЕН АГУЗУМЦЯН

Академия государственного управления РА, заведующий кафедрой психологии управления, кандидат психологических наук, профессор

ЛАУРА ПЕТРОСЯН

Академия государственного управления РА, доцент кафедрой психологии управления, кандидат психологических наук

АНИ ХАЧАТРЯН

Академия государственного управления РА, младший научный сотрудник научно–исследовательской лаборатории "Психология управленчнеской деятельности"

Проблема безопасности управленческой деятельности в психологических исследованиях появилась недавно. Актуальность этой проблемы обусловлено требованием времени, потому что это один из основных психологических факторов эффективной работы человеческих ресурсов. Психологическая безопасность человека обусловлено исключением тех угроз, которые существовав в трудовой деятельности, часто выражаются психосоматическими проявлениями. Тем не менее, они часто не видны из-за отсутствия непосредственной связи между

работой и соматических проявлений. Многочисленные исследования показывают существование этого явления, но никаких научных подтверждений проявления, процесса развития и пути профилактики этого явления у менеджеров нет.

THE PROBLEM OF THE PSYCHOLOGICAL SAFETY OF MANAGEMENT ACTIVITY

RUBEN AGHUZUMTSYAN

Head of Chair of Psychology of Management of the Pudlic Administration Academy of the Republic of Armenia, Ph.D, Professor

LAURA PETROSYAN

Associate Professor of Chair of Psychology of Management of the Pudlic Administration Academy of the Republic of Armenia, Ph.D

ANI KHACHATRYAN

Pudlic Administration Academy of the Republic of Armenia, Research Laboratory of Psychology of Administrative Activities, Junior Researcher

The problem of safety of management activity in the psychological research has emerged recently. The urgency of this problem conditioned by the demand of time because this is one of the main psychological factors of human resources' effective work. The psychological safety of a person is conditioned by excluding the dangers in labor activity, which often expresses as psychosomatic manifestations. However, they are not often visible because of lack of the immediate relationship between work and somatic manifestations. Numerous studies show the existence of the phenomenon. However, there is no scientific corroboration of manifestation of this phenomenon, process of development and ways of prevention within managers. In this terms implementation of scientific works in this sphere have great importance.

Սույն աշխատանքը կատարված է «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» 15T–5A297 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Данная работа выполнена в рамках научного исследования на тему "Психологическая безопасность управленческой деятельности" под шифром 15T–5A297.

This work was performed as part of scientifictopic on Psychologocal Safety of Management Activity, under the code 15T–5A297.